տեսեալ զարնանս վէնէտիկցին ևս ելանէ ի պատերազմ. բայց թուի թէ սուտ իցէ...։ Թանկութիւն կերլեաց և դժուարագիւտ։... ի նիչու բազումք եկեալ են աստ խուժադուժք, հիւանդութիւնք բազումք ի մէջ քաղաքիս, ևս ի մէջ հայոց... ... Այս Եսայի տղաս [ծառայն Հ. Միքայելի], զբազում և զարմանալի աշխատութիւնս և զծառայութիւնս արարեալ է հայր յակոբին ի ժամանակս հիւանդութեան նորին, ինքն միայնակ մինչև ի յաւանդումն հոգւոյ նորին. ցան հայր յակոբին խիստ դառնագոյն և աղեռալի, ինքն ասեր է բերանովն թէ եօթ ցաւ ունիմ, ոտից մինչև ի լանջն ուռուցեալ, ի մի կողմն վերք բացեալ, երկար ժամ ի նոյն կողմն կալով... ապա թէ զակաւ կերակուր ընդունիլ կարէր ի մէջ գիշերի, այն ևս մնայր ի կոկորդն, և ասացեալ է. այս ի՞նչ պինդ հոգի ունիմ....։

Գերյարգութեան քում
Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

Գրեցաւ յամի Տեառն 1737
Նոյեմբերի 12ին
2 գիր, ի Պելրղատու

ՀԴ.

Առևտրական կեանքի ու քաղաքական դէպքերու անցեալ յիշատակնե՛ր մը ահա։

Գերյարգելոյ Աբբայ Հօրդ իմոյ, և Տեառն Տեառն Միխիթարայ
Աստուածաբանութեան վարդապետի

... ... Թէ ի կողմանէ ապրուստի և պատերազմի հարցանէք, թանկ և դժուարագիւտ. զհացն խլելով առնուն, զձէթն և զարդար եղն ֆունթն 30 ստակ, հաւկիթն երեքն հինգ ստակ, և ոչ գտանի. աստ մեծ խումբ մի երկու աւուր հեռի ի կողմն պօսնայու ձմեռեն. և այլք փոքր խումբք աստ և անդ. փոխանորդ և հրամայող և կառավարող է ձէնռալ Ֆիլիպօն. ասեն թէ ի զարնան գալոց է ձէնռալ Մալֆին, Սեռական կառավար, թէպէտ ինքն հրաժարեալ վասն ծերութեան որ 60 ամաց է ասեն։ Իսկ տաճիկքն սիրտ առեալ զօրացեալ զազանացեալ յաւուրս յայսոսիկ ասպատակիչք հասեալ մինչև ի կողմունս օսմանայու, աւար հարկանէ, բանքէ, գերէ, սպանանէ, այժմիկ լուսք զայսոսիկ. երկիւղն պատերազմին ապագայի ամի հալէ զոսկերս իմ...։

Գերյարգութեան ձերում
Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ. Սեբաստացի

Գրեցաւ յամի Տեառն 1737ին
Նոյեմբերի 22ին
ի տօնի Զէչիլեայ կուսին
3 գիր, ի Պելրղատ

ՀԵ.

Պարունակութեան տեսակէտով՝ առատ, բազմատեսակ ու միանգամայն կարևոր է Հ. Միքայէլի հետագայ թուղթը, զոր իր պաշտօնավայրէն կը յղէ։